ԳԵՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ

ՄՍԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ԵՒ ՆՐԱ «ՀՐԱՀԱՆԳ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԺԹ. դարի կրոնական անվանի գործիչ, մատենագիր, բանաստեղծ, խմբագիր, մանկավարժ Մսեր Գրիգորյան Զմյուռնացին (1808-1873) հայտնի է նաեւ Մսերյան(ց) ազգանվամբ[1]: Նա ծնվել է Զմյուռնիայում, այստեղից՝ նրա Զմյուռնացի ազգանունը: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Մեսրոպյան վարժարանում՝ աշակերտելով գրաբարագետ, գրող Հովհան Միրզա-Վանանդեցուն: 1825 թվին տեղափոխվել է Էջմիածին եւ ուսումը շարունակել վանական դպրոցում[2]: Նա եղել է Կաթողիկոսի ատենադպիրը: 1848 թվին տեղափոխվել է Մոսկվա եւ մինչեւ իր կյանքի վերջը պաշտոնավարել Լազարյան ճեմարանում՝ դասավանդելով կրոնի պատմություն եւ հայոց լեզու: Իր որդու՝ Զարմայր Մսերյանի հետ 1858-62 թվերին հրատարակել է «Ճռաքաղ» ամսագիրը, իսկ 1861-64 թվերին՝ «Համբաւաբեր Ռուսիոյ» երկշաբաթյա թերթը: Գրաբարով հրատարակել է բանաստեղծություններ եւ պատմական երկու արժեքավոր աշխատություն՝ «Ցիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պայազատաց Լազարեան տոհմին» (Մոսկվա, 1856) եւ «Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմիոնէ մինչեւ ցՅովհաննէս Ը.» (Մոսկվա, 1876), կազմել է կրոնական մի քանի դասագրքեր, որոնցից են՝ «Հաւատապատում, կամ այն է Մանր ուսմունք քրիստոնէական հաւատոյ» (Մոսկվա, 1850), «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ» (Մոսկվա, 1850), նամակներ է գրել Խ. Աբովյանին եւ Հ. Ալամդարյանին:

Մսեր Գրիգորյանի կրոնադավանաբանական բնույթի «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ» դասագիրքը գրվել ու հրատարակվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսես Աշտարակեցու թույլտվությամբ եւ հովանավորությամբ: Իսկ սույն գրքի աշխարհաբար մեր թարգմանությունը լույս է տեսել գրքի խմբագիր Էմմանուել վարդապետ Աթաջանյանի հովանավորությամբ:

Աշխատությունը, որ գրված է ընտիր գրաբարով, գիտական ու գործնական մեծ դեր է խաղացել: Այն բաղկացած է առաջաբանից, երկու մասից եւ վերջաբանից: Նյութն ավելի պարզ ու մատչելի դարձնելու նպատակով հեղինակը դասագիրքը կազմել է զրույցի ձեւով, այն է՝ նախ տալիս է հարցը եւ ապա պատասխանում է: Դրա

1 Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», 1982, հ. 8 էջ 61: Գառնիկ Ստեփանյան, «Կենսագրական բառարան», հ, Գ., գիրք 1, 1990, էջ 82:

2 Տե՛ս անդ: *Հանրագիտարանում սխալանք կա, գրված է՝ «ուսումը շարունակել է Գեւորգյան ճեմարանում(Խ. Աբովյանի հետ)»*: Մինչդեռ Աբովյանը Էջմիածնում եղել է 1819-22 թթ., իսկ ճեմարանը բացվել է 1874-ին:

վերաբերյալ գրքի առաջաբանում նա գրում է. «Եւ սա դյուրին կերպով մատուցելու եւ մեր մանուկների գործը հեշտացնելու համար գրեցի հարց ու պատասխանի ձեւով. ոչ շատ ընդարձակ եւ ոչ շատ համառոտ, այլ ամեն կերպ ըստ հնարավորին պահպանելով չափը, կամ էլ ըստ շատերի կարծիքի՝ միջին գիծը» (էջ Թ.): Առաջաբանում նա նաեւ նշում է. «Սակայն եւ զայն արժան է խոստովանել՝ զի ուր ուրեք հաստատութեան բանից պէտք էին, յաճախագոյն ի ներքս ածի ո՛չ միայն զառ ի Նախնեացն մերոց վկայութիւնս, այլ եւ զայլասեռիցն Հարց սրբոց գիտնաւորաց» (նույն տեղում): Նա վկայակոչում է Աստվածաշունչը, մեր սուրբ Հայրերից Գրիգոր Լուսավորչին, Սահակ Պարթեւին, Մեսրոպ Մաշտոցին, Կոմիտասին, Հովհան Օձնեցուն, Ներսես Շնորհալուն, Գրիգոր Տղային, ինչպես նաեւ Ագաթանգեղոսին, Մովսես Խորենացուն, Գրիգոր Նարեկացուն, Սարգիս Շնորհալուն, Ներսես Լամբրոնացուն եւ շատ ուրիշների, իսկ օտարազգի սուրբ Հայրերից՝ Եփրեմ Ասորուն, Աթանաս Ալեքսանդրացուն, Կյուրեղ Երուսաղեմացուն, Կյուրեղ Ալեքսանդրացուն, Գրիգոր Սքանչելագործին, Հովհան Ոսկեբերանին, Գրիգոր Նյուսացուն եւ այլոց:

Գրքի «Տեղեկութիւն» բաժնում հեղինակը քննում է քրիստոնեական եկեղեցու դավանանքի հիմքը կազմող հավատի Հանգանակը կամ Հավատամքը՝ նշելով Նիկիայի, Կոստանդնուպոլսի եւ Հայ Առաքելական Եկեղեցու հավատի հանգանակների միջեւ եղած ընդհանրություններն ու տարբերությունները: Նա եզրակացնում է, որ մեր եկեղեցու հավատի Հանգանակն ավելի շատ նման է Նիկիականին: Նիկիայի տիեզերական ժողովին (325 թ.) մասնակցել է նաեւ մեր հավատի առաջնորդ Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը: Նա Հայաստան է բերել Նիկիայի ժողովում ընդունված հավատի Հանգանակը, որն ընդունել եւ հաստատել է Գրիգոր Լուսավորիչը: Հետագայում՝ մինչեւ Եփեսոսի տիեզերական ժողովը (431 թ.) Հայ Առաքելական Եկեղեցու հավատի հանգանակը հարստացել է կարեւոր բացատրություններով ու խմբագրություններով՝ կատարված մեր կաթողիկոսների կողմից: Հեղինակը գրում է. «Հայաստանյայց եկեղեցու Հանգանակը հենց նույն Նիկիականն է, բայց հարստացած կարեւորագույն բացատրություններով սուրբ Գրիգոր Լուսավորչի, նրա հաջորդների եւ մեր առաջին հայրապետների կողմից, որոնք եղել են Եփեսոսի ժողովից առաջ՝ ամբողջովին հերքելով նրանց ժամանակ ծագած եւ տարածված աստվածընդդեմ մոլորությունները, այն է՝ Արիոսի, Մակեդոնի, Եւնոմյանների, Ապողինարյանների եւ ուրիշների»:

Այնուհետեւ հեղինակը ծանոթությունների 27 կետերում հանգամանորեն համեմատում է Նիկիայի ու Կոստանդնուպոլսի (381 թ.) ժողովների ընդունած հավատի հանգանակները եւ եզրակացնում է, որ մեր Եկեղեցու Հանգանակը բարեփոխված ու մշակված նույն Նիկիականն է, իսկ Կոստանդնուպոլսի Հանգանակը այն է, ինչ մինչեւ օրս գործածում են օրթոդոքս եկեղեցիները:

Գրքի առաջին մասի առաջին գլխում Մսեր Գրիգորյանը քննում է հավատի ուսմունքի գլխավոր մասերը, որոնք տասն են՝ Աստծու գոյությունը, Աստվածային կատարելությունները, Աստվածության Երրորդությունը, արարչագործությունը, նա-

խախնամությունը, Աստվածորդու մարդեղությունը, Քրիստոսի Եկեղեցին եւ նրա խորհուրդները, շնորհաբաշխությունը, մեռելների հարությունը, վերջին դատաստանը:

Աստծու գոյությունը վկայում եւ քարոզում են Սուրբ գրքերը: Աստված, բնությամբ լինելով ամենակատարյալը, ունի միմիայն Իրեն հատուկ կատարելություններ: Նա անփոփոխ է, անչափ կամ անսահման, ամենակարող, ազատ, ամենիշխան, ամենագետ կամ ամենիմաստ, ամենապարզ կամ պարզագույն, մշտնջենական կամ հավիտենական, անմահ, ամենաբարի, ամենասուրբ, ամենավայր, այսինքն՝ ամենուրեք ներկա եղող:

Սուրբ Երրորդության մեջ երեք Աստված չկա, այլ երեք անձ՝ մեկ Աստվածության մեջ եւ մեկ Աստվածություն՝ երեք անձերի մեջ: Սուրբ Երրորդության առաջին անձը կոչվում է Հայր, երկրորդը՝ Որդի կամ Բան, երրորդը՝ Սուրբ Հոգի կամ Աստծու Հոգի: «Գնացե՛ք, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մատթ. ԻԸ.): «Երեքն են, որ երկնքում վկայում են՝ Հայրը, Բանը եւ Սուրբ Հոգին, եւ այս երեքը մեկն են» (Ա. Յովհ. Ե. 7):

Արարչագործությունը եռանձնյա Աստվածության արտաքին ներգործությունն է, որով անէությունից գոյացել են բոլոր արարածները: Աստծու խնամքով բոլոր արարածները խնամվում, պահպանվում, կառավարվում եւ հասնում են իրենց վախճանին:

Հիսուս Քրիստոս, կույս Մարիամի արյունից մարդկային բնություն եւ մարմին առնելով, Իրենում միավորեց Աստվածային անձն ու էությունը եւ անխառն միությամբ դարձավ կատարյալ մարդ՝ կատարյալ Աստվածությամբ: Քրիստոս, երբ կամենում էր, ցույց էր տալիս Իր աստվածային զորությունը եւ ներգործում էր աստվածային հատկություններով, իսկ երբ կամենում էր ցույց տալ մարդկային խոնարհությունը, ազդում էր մարդկային հատկություններով: Քրիստոսի մարդեղությունն ունի իր խորհուրդները՝ հղացումը, ծնունդը, մկրտությունը, քարոզությունները, հրաշագործությունները, չարչարանքները, մահը, թաղումը, հարությունը, համբարձումը եւ Հոր աջ կողմում նստելը: Աստվածորդու հղիանալը կույսի արգանդում եղավ Սուրբ Հոգու զորությամբ: Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, հունվարի 6-ին (տե՛ս նաեւ Մատթ. Բ. 1) : Նա մկրտվեց Հովհաննես Մկրտչի կողմից Հորդանան գետում: Ջրից դուրս ելնելիս Նրա առջեւ բացվում է երկինքը, եւ Աստծու Հոգին աղավնակերպ իջնում է Նրա վրա՝ ցույց տալու համար Նրա Աստվածային փառքի մեծությունը, եւ երկնքից ձայն է լսվում. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, որն ունի Իմ ամբողջ բարեհաճությունը» (Մատթ. Գ. 17): Մկրտվելուց հետո Հիսուս սկսում է Իր քարոզությունները, որոնք խրատներ էին, առակներ, պատվիրաններ եւ կարեւոր վարդապետություններ մարդկային հոգու փրկության համար: «Այն խոսքը, որ Ես ասացի ձեզ, հոգի է եւ կյանք» (Յովհ. Զ. 64):

Հիսուս բազմաթիվ հրաշքներ կատարեց՝ քայլեց ծովի վրայով, կույրերի աչքերին լույս տվեց, մեռածներին վերակենդանացրեց, ջուրը գինու փոխարկեց, դեւերին հալածեց, քիչ հացով հազարավոր մարդկանց կշտացրեց եւ այլն:

Չարանախանձ հրեաների կողմից Հիսուս բազմատեսակ չարչարանքներ կրեց՝ հալածվեց, հանդիմանվեց, բամբասվեց, կապվեց, ապտակվեց, գանահարվեց, բեւեռվեց խաչափայտին, խոցվեց: «Եւ ոմանք սկսեցին թքել Հիսուսի երեսին, շորով գլուխը ծածկել, բռունցքով խփել ու ասել. Մարգարեացի՛ր մեզ, Քրիստո՛սդ, այն ո՞վ է, որ քեզ խփեց: Եւ սպասավորները ապտակում էին Նրան» (Մարկ. ԺԴ. 65):

Հրեաները նախանձից Հիսուսին մահվան ենթարկեցին եւ իբրեւ մահապարտի Նրան բեւեռեցին խաչափայտին, թեեւ մահվան համար ոչ մի պատճառ չգտան: «Եւ մահվան արժանի ոչ մի հանցանք չգտնելով՝ Պիղատոսին խնդրեցին սպանել Նրան» (Գործ. ԺԳ. 28): Հիսուսի մարմինը գերեզմանի մեջ դրին: Հիսուս, թեեւ մարդկային մարմին ուներ, բայց Աստվածությունից անբաժան լինելով՝ ապականության չենթարկվեց: «Հիսուս, Որին Աստված հարություն տվեց, ապականություն չտեսավ» (Գործ. ԺԳ. 37): Հիսուս երրորդ օրը հարություն առավ. «Երրորդ օրն Աստված Քրիստոսին հարություն տվեց» (Գործ. Ժ. 40): Եւ Նա Իր հարությամբ մեզ հոգեւոր հարություն շնորհեց առաքինի կամ արդար կյանքի համար:

Հիսուս Քրիստոս երկրորդ գալստյան ժամանակ անաչառորեն դատելու է բոլոր ողջ եւ մեռած մարդկանց՝ յուրաքանչյուրին հատուցելով ըստ իրենց կատարած գործերի: «Մարդու Որդին գալու է Իր Հոր փառքով Իր հրեշտակների հետ միասին» (Մատթ. ԺԶ. 27): Արդարները ժառանգելու են երկնային արքայությունը, իսկ մեղավորները մատնվելու են հավիտենական դատապարտության: «Այն ժամանակ Նա կասի Իր աջ կողմում եղողներին. «Եկե՛ք, Իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցե՛ք արքայությունը» (Մատթ. ԻԵ. 34): «Այն ժամանակ Նա Իր ձախ կողմում եղողներին կասի. «Ինձանից հեռո՛ւ գնացեք, անիծյալներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է սատանայի եւ իր հրեշտակների համար» (Մատթ. ԻԵ. 41):

Գրքի առաջին մասում ասվածն անվերապահորեն հաստատելու համար երկրորդ մասում համապատասխան համարի տակ կատարվել են անհրաժեշտ մեջբերումներ Աստվածաշնչից, ինչպես նաեւ հայ եւ օտարազգի սրբազան Հայրերի վարդապետություններից: Մեջբերումներում երբեմն կատարվել են փոփոխություններ եւ կրճատումներ: Այդ բանը ցույց տալու համար բերենք միայն մեկ օրինակ առաջին եւ երկրորդ մասերից: Պատասխանների վերջում՝ փակագծերում, դրված թվերը երկրորդ մասի համապատասխան համարներն են: Այսպես՝

Առաջին մաս՝

Հ. Ո՞վ է քրիստոնեական հավատի հիմքն ու բուն հեղինակը:

Պ. Մեր Տեր Հիսուս Քրիստոսն է (1):

Երկրորդ մաս՝

1.Քրիստոնեական հավատի հիմքը եւ բուն հեղինակը կամ վարդապետը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է: Այնուհետեւ այդ միտքը հաստատելու համար հիշատակում է հինգ վկայություն՝

ա. Որովհետեւ ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրված այն հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է, եւ այս վեմի վրա հաստատվել է հավատը, իսկ հավատի վրա՝ շենքը

մինչեւ իր ավարտը: Բայց հիմքը Նա Ինքն է ամբողջ շենքի հենց սկզբից (Ս. Հակոբ Մծբնեցի, Ճառ Ա., Հավատի մասին):

գ. Բայց դուք որեւէ մեկին ուսուցիչ մի՛ կոչեք, որովհետեւ ձեր ուսուցիչը մեկն է: Եւ ուսուցիչներ չկոչվեք, որովհետեւ Քրիստոս է ձեր ուսուցիչը (Մատթ. ԻԳ. 10):

դ. Դուք Ինձ Վարդապետ ու Տեր եք կոչում եւ լավ եք անում, քանի որ իսկապե՛ս եմ (Յովհ. ԺԳ. 13):

ե. (Քրիստոս) կատարեց ամբողջ արդարությունը մեր մարդկության փառքի ու պարծանքի համար եւ եղավ բոլոր արարածների Վարդապետը (Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում ճառք, ԺԳ.):

Ահա այս սկզբունքով են կազմված սույն դասագրքի առաջին եւ երկրորդ մասերը:

Ամեն մի քրիստոնյայի համար շատ կարեւոր են նաեւ Աստծու շնորհաբաշխությունները: Աստծու անվարձահատույց բարերարությունից Սուրբ Հոգու միջոցով մարդկանց բաշխվում են զանազան շնորհներ ու պարգեւներ, իհարկե, տարբեր մարդկանց տարբեր չափով, ում որքան որ կկամենա Աստված: Այդ շնորհներն են՝ իմաստությունը, գիտությունը, բժշկությունը, մարգարեությունը, թարգմանությունը, լեզվախոսությունը, սքանչելագործությունը (հրաշագործությունը), հոգիները զանազանելու ընդունակությունը: Այս շնորհները մարդը կարող է ընդունել եկեղեցու խորհուրդների միջնորդությամբ, աղոթքներով եւ ճշմարիտ խոնարհությամբ:

Մսեր Գրիգորյանն իր ձեռնարկի առաջին մասի երկրորդ գլխում գրում է հույսի, երրորդում՝ սիրո եւ տասնաբանյա պատվիրանների մասին: Հույսը Աստծու կողմից մեզ խոստացած բարիքների ակնկալությունն է հանդերձյալ աշխարհի համար, իսկ խոստացած բարիքներն են հավիտենական անվախճան կյանքը, հանգիստը եւ երանությունը:

Իսկ Աստծու սերը կամ սերն առ Աստված այնպիսի զգացում է կամ հոգու հոժարություն, որը մեր բուն բարությունն է կամ վերջին վախճանը: «Սիրենք Աստծուն, որովհետեւ առաջինը Նա սիրեց մեզ» (Ա. Յովհ. Դ. 19): Աստծու սերը մեզնից պահանջում է կատարել Նրա օրենքները կամ պատվիրանները: Աստվածային օրենքները կանոններ են, որոնք պատվիրում են ոչ միայն չարիք չգործել, այլեւ բարիք գործել: «Բարությո՛ւն փնտրեցեք եւ ոչ թե չարություն, որպեսզի ապրեք, եւ ձեզ հետ լինի ամենակալ Տեր Աստված» (Ամովս, Ե. 14):

Աստծու բարոյական օրենքները ամփոփված են տասնաբանյա պատվիրաններում կամ պատգամներում: Դրանք են՝ ա. Ինձնից բացի, ուրիշ աստվածներ չունենաս: բ. Քեզ համար կուռքեր չշինես: գ. Քո Աստծու անունը զուր տեղը չհիշես: դ. Հիշի՛ր շաբաթ օրը սուրբ պահել: ե. Պատվի՛ր քո հորն ու մորը: զ. Մի՛ սպանիր: է. Մի՛ շնացիր: ը. Մի՛ գողացիր: թ. Սուտ մի՛ վկայիր: ժ. Մի՛ ցանկացիր տիրել քո ընկերոջ տանը, նրա դաշտին, կնոջը, ծառային, անասունին եւ այն ամենին, ինչ նրանն է (տե՛ս Ելից Ի. 3-17, Բ. Օրին. Ե. 7-21):

Նշվում է, որ եթե մեկը խախտում է ինչ-որ պատվիրան, դա նշանակում է, որ

նա մեղք է գործում: Առաջացման տեսակետից մեղքերը բաժանվում են երկու տեսակի՝ սկզբնական եւ ներգործական: Սկզբնականը նախամարդու՝ Ադամի մեղք գործելն է Ամենակալ արարչի դեմ: Ադամը, չնազանդվելով Աստծու պատվիրանին, կերակ արգելված՝ գիտության ծառի պտուղը: Ներգործականն այն մեղքերն են, որոնք մենք ինքներս ենք կատարում մեր կյանքի ընթացքում: Դրանք կատարվում են չորս ձեւով՝ ա. Միայն իր խորհրդով հուսահատության, ատելության, նախանձի, թերահավատության եւ այլ հոգեվիճակներում: բ. Խորհրդով եւ խոսքով բամբասանքի, հայհոյանքի, զրպարտության, չարախոսության, ստախոսության եւ այլ միջոցներով: գ. Խորհրդով եւ գործով գողության, հափշտակության, շնության, սպանության եւ նման այլ միջոցներով: դ. Զանցառությամբ, ինչպես, օրինակ՝ բարին իմանալը եւ չանելը, շնորհները եւ ձիրքերը թաքցնելը, կարողանալը, բայց ուրիշների համար բարիք չկատարելը եւ այլն:

Մեղքերն իրենց ծանրության տեսակետից բաժանվում են երկու տեսակի՝ մահաչափ եւ թեթեւ: Մահաչափ մեղքերը կատարվում են գործողի կամքով, որոնցից գլխավորները յոթն են՝ հպարտությունը, նախանձը, բարկությունը, ծուլությունը, ագահությունը, որկրամոլությունը, բղջախոհությունը: Այդպիսի մեղքեր կատարողները դատապարտվում են հավիտենական պատժի, ինչպես նաեւ զրկվում են երանելի կյանքից: Թեթեւ կոչվում են այն մեղքերը, որոնք կատարվում են գործողի տկարության եւ չիմացության պատճառով:

Հայտնի է, որ մարդը չի կարող իսպառ զերծ լինել տարբեր տեսակի մեղքերի ներգործությունից, բայց Աստծու օժանդակությամբ եւ աղոթքների միջոցով նա կարող է զգուշանալ հոժարակամ մեղանչելուց: Աղոթելիս մարդը պարտավոր է զգուշանալ, որպեսզի աղոթքը չլինի ցուցադրական կամ կեղծավոր, այլ լինի ճշմարիտ: Պետք է աղոթել հոգով, ճշմարտությամբ, խոնարհությամբ, աստվածավախությամբ եւ կատարյալ հավատով: «Անդադար աղոթեցե՛ք, ամեն ինչում գոհություն մատուցե՛ք, որովհետեւ այդ է Աստծու կամքը..., փորձեցե՛ք ամեն ինչ, բարին ամուր պահեցե՛ք, հեռու մնացե՛ք բոլոր չար բաներից» (Ա. Թեսաղ. Ե. 17-22):

Քրիստոսի վարդապետությունները ժողովրդի մեջ հիմնականում տարածվում են եկեղեցու միջոցով: *Եկեղեցի* ասելով պետք է հասկանալ Քրիստոսի ճշմարիտ հավատացյալների ընդհանուր բազմությունը՝ ժողովարանը (հունարեն՝ Ecclesia):

Եկեղեցին ունի իր խորհուրդները, որոնք յոթն են՝ մկրտություն, դրոշմ, ապաշխարություն, հաղորդություն, ամուսնություն, ձեռնադրություն, հիվանդների օծում, որոնք սահմանվել են մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից: Մկրտության, դրոշմի եւ ձեռնադրության խորհուրդներից բացի, մյուսները կարող են կրկնվել: Մկրտությունը Քրիստոսի թաղման խորհրդանիշն է, իսկ դրոշմն ու ձեռնադրությունը անդառնալի ու անփոփոխելի են: Դրոշմը հաստատվել է Սուրբ Հոգու՝ առաքյալների վրա Հոգեգալստյան (Պենտեկոստեի) օրն իջնելու ժամանակ, իսկ ձեռնադրության կարգի խորհուրդը՝ Քրիստոսի համբարձման օրը: Ձեռնադրվողները ստանում են հետեւյալ իրավունքները՝ դռնապահության, ընթերցանության, երդմնեցուցչության, ջահընկալութ-

յան, կիսասարկավագության, քահանայության: Եպիսկոպոսությունը ոմանք համարում են ութերորդ աստիճանը, իսկ կաթողիկոսությունը՝ եպիսկոպոսապետություն:

Հաղորդության խորհուրդը Հիսուս Քրիստոսը սահմանել է Իրեն մատնելու գիշերը, այսինքն՝ Բաղարջակերաց տոնի առաջին երեկոյան: «Մինչ նրանք դեռ ուտում էին Հիսուս հաց վերցրեց, օրհնեց, կտրեց, տվեց աշակերտներին եւ ասաց. «Առե՛ք, կերե՛ք, սա է Իմ մարմինը»: Եւ բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Դրանից բոլորդ խմեցե՛ք, որովհետեւ դա է նոր Ուխտի Իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ նրանց մեղքերին թողություն տալու» (Մատթ. ԻԶ. 27-28):

Ապաշխարության խորհուրդը Քրիստոս հաստատեց առաքյալների վրա Սուրբ Հոգու փչմամբ եւ նրանց մեղքերին թողության իշխանություն տվեց: «Նրանց վրա փչեց եւ ասաց. Առե՛ք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրան ներված կլինի, իսկ եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Յովհ. Ի. 22-23):

Երբ Քրիստոս վճռեց, որ այր եւ կին անբաժանելի պիտի լինեն, դրանով ամուսնության կարգը Նա համարեց որպես սրբազան խորհուրդ: «Ապա ուրեմն՝ (այր եւ կին) ոչ թե երկու, այլ մեկ մարմին են: Արդ, ինչ որ Աստված միավորեց, մարդը թող չբաժանի»(Մատթ. Ժ. 6):

Հավատացյալ քրիստոնյայի համար շատ օգտակար է քրիստոնեության հիմունքների իմացությունը եւ ավետարաններին ծանոթանալը: Այստեղ տեղին է հիշել Գրիգոր Լուսավորչի խոսքը. «Միշտ օգտակար է Ավետարանի դաստիարակությունը՝ մեզ սովորեցնելու բարի կարգերը, որպեսզի մխիթարվելով Սուրբ Հոգու շնորհներով՝ ճշմարտությամբ բազմացնենք արդար գործերը սուրբ սրտով եւ առ Աստված ունեցած ուղղափառ հավատով» (Յաճախապատում ճառք, գլուխ Բ.):

Հեղինակը, մեջբերելով Սարգիս Շնորհալու՝ Պետրոս առաքյալի երկրորդ թղթի մեկնությունը, գրքի շատ համառոտ վերջաբանում նշում է, որ առաքյալների ավանդած դավանությունը, որպես աստվածային ժառանգություն, սուրբ Հայրերը հասցրել են մինչեւ իր ժամանակները առանց հերձվածներին խառնելու, եւ իրենք էլ պարտավոր են անարատ պահել եւ փոխանցել հաջորդ սերունդներին: